

350 զինուոր ու երկու թնդանօթ առած՝ շարժեցաւ Դաճուվայէն Ատենի ծոցին վրայ, դէպ 'ի հարաւային եթովպիա, և մտաւ կալլաներուն երկիրը: Բայց այն երկու արշաւանքն ալ անբաղդ եղան: Ավենարուպ զարնուելով եթովպացիներէն Ագրլայի մօտ դաւաճանու թեամբ յաղթուեցաւ ու մեռաւ: Իրեն հետ ընկաւ նաև նշանաւոր հայկողուն մը, Առաքէլ Պէյ Ապրոյ, Մասովայի քաղաքապետ, որ վսեմափայլ նուպար փաշային հօրաքեռորդին էր, տաղանդաւոր և ազնիւ երիտասարդ: Ինչպէս նաև զոհ եղաւ եթովպացւոց կատաղութեանը՝ Կոստանդնուպօլսի աւստրոհունգարական դեսպան Զիյի կոմսին որդին կամ եղբորորդին՝ Զիյի կոմս աբիասիրտ երիտասարդը: Եթովպացիք 'ի սկզբան երկիւղ ձևացունելով՝ ետ ետ քաշուեր են. եգիպտական զօրքն ալ աւելի ևս վստահութեամբ անոնց ետէն ընկնալով երբոր ելէջաւոր տեղ մը հասեր են, հօն դարանալով եթովպացիք չորս կողմէն: Վրանին յարձրկելով՝ գաղանաքար զամենն ալ ջարդեր են: Եթովպացւոց այս հրոսակներուն՝ քաջրան անունով անգղիացի զինուորական մը հրամանատար է եղեր իսկ Մունչինկէր հասնելով Ասալ լիճն ու առ երես սիրայիր ընդունելութիւն գտնելով տեղացի բնիկ կալլաներէն,

գիշերանց յանկարծ պաշարուեցաւ վրանին մէջ, 15 նոյեմբերի 1875, ու մահացաւ վիրաւորուեցաւ: Կինն որ երբէք չէր զատուեր իրմէն՝ քովն սպաննուեցաւ, հետն ալ իրեն հոյրենակիցն ու բարեկամը Ռակէնմախէր (Raggenmacher) անունով: Եգիպտացիք յաղթուած ետ քաշուեցան մեծամեծ կորուստներով, հետերնին առած իրենց զորավարը՝ մահացաւ վիրաւորուած, որ յառաջ քան մոռնելն եգիպտական հոգը՝ մեռաւ ճամբուն վրայ: Բայց նոյն իսկ այն վերջին վայրկեաններն ալ միակ մտածմունքն ու խօսքն իր քովին ներուն՝ այն էր որ նոյն երկրին աշխարհացոյցն հանեն:

Յիրաւի եզակի անձանց մէկն եղաւ Մունչինկէր, և արդիւնաւոր՝ քաղաքական յառաջադիմութեան. այն աբիասիրտ մշակաց մէկն, զորոնք մեր դարը կը դրկէ աշխարհքիս անմարդաբնակ կողմերը պատրաստել, ուր քիչ ժամանակէն քաղաքակրթութիւնը պիտի երթայ հաստատապէս հանգչելու: Վերջապէս անոնցմէ մէկն եղաւ, որոնք իրենց անհամբեր բարոյքը՝ նոյն իսկ ներառուութեամբ, կը լրացունեն ուրիշ այնչափ այլոց անգործութիւնը, և արդեամբ կը քարոզեն թէ իրացընէ աշխարհս առաջ կը քայլէ:

ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱՅԺԱՆԵԱԼԻ Ի 1876 ՍՄԻՆ

ԱՊՐԷՏ ՀՈՒՄՍ, անգղիացի երևելի երգարար էր, և մարտի, մեռաւ 'ի Բարիք 'ի հասակի 39 ամաց, սրտի հիւանդութեամբ: Բազմաթիւ նուագներէ, երգերէ, մեղեդիներէ, և այլն, զատ ունի մէկ մեծ եղբերգութիւն մը (Opéra), հինգ արարուածով, Ines de Castro, որ իր գործոց գլուխ կը համարուի:

ՅՈՒՍԵՓ ՍԻՆԻՍԻՆԻ, գերմանացի հնախոյ, որ 3 մարտի կ'այցեկէր Ամաթոնտի հռչակաւոր հին զամբաններուն, Լառնա-

գայի մօտ, Կիպրոս կղզւոյն մէջ. յանկարծ աւերակներէն քար մը գլխուն ընկաւ ըսպաննեց զինքը: Գիտութեան այս զոհը 23 տարեկան էր, և Լիբսիա ծնած էր:

ՀԵՐՈՒՍՏՈ ՊԵԱՐ, գաղղիացի անուանի քիմիագետ, որ 1826 թուականին գտաւ պարզ մարմինն պրոմ, որ յունարէն գարշահոտ ըսել է:

ԱՋԵՍՏԵՍԻ ՍՏԵՎԻՆՈՒ (Stewart) Սմերկոյ, գուցէ բոլոր աշխարհիս ամենէն մեծ ձուռարուեստաւորը (Industrial), մեռաւ 10

ապրիլի 'ի Նիւ-Եոք: Ժառանգութիւնն որ թողուց կը հասնի 500 միլիոն ֆռանգաց, որ 5 առ 10 տարին, կը բերէ ամիսն երկու միլիոն և աւելի եկամուտ: Մնաւ յունուարի 1800 թղականին 'ի Պէլֆուստ, իռլանտացի աղբոր տնայէ մը, և ինքն իրեն ձեռք բերաւ իր կրթութիւնն ու իր հարստութիւնն, 'ի սկզբան վաճառելով անկուածոյ Հիւսուածք իռլանտիոյ 'ի Նիւ-Եոք: Իր անունն ամեն կողմն կը հնչուէր իբր Մեկինաս զեղարուեստաւորաց, կը գնէր անոնց պատկերները մեծ մեծ գումարներ տալով, ինչպէս վերջերս գնեց զաղղիացի Մէյսոնիէ (Meissonnier) երեսելի արուեստագիտին մէկ պատկերն, որուն անունն էր 1807, տալով 300000 ֆռանգ: Կարենէի բարեկամ էր և օգնող հարստահարեալ ժողովրդոց, և յամին 1871 սովացեալ Բարիզու պարզե զրկեց քառասուն հազար պարկ ցորեն:

ՊԱՐՈՆ ՍԻՄԵՈՆ ՍԻՄԱ, յունազգի առաջին սեղանաւոր Աւստրիոյ, որ մեռաւ 15 ապրիլի 'ի Վեննա, և թողուց հարստութիւն 215 միլիոն ֆռանգ, որ պիտի բաժնուին չորս զստերացը մէջ, որոնց առաջինն աւուսնացիք է Վիմֆէն աստրիացի կոմսին հետ, երկրորդը՝ Գաստրիք դքսին հետ, որ Մագ-Մահոն Դքսուհայն եղբայրն է, երրորդը՝ Իփսիլանդի յոյն իշխանին հետ, և չորրորդը՝ Գէորգ Մաւրդորտաւոյ յոյն իշխանին հետ: Պարոն Սինա արքայալայել բարերարութիւններ ըրած է Յունաստանի, կանգնելով Ճեմարան, Հիւսանդանոց, դիտարան, և այլն, Աթենքի մէջ, ու ճոխացուցեր է վանոնք առատ եկամուտներով, թող ուրիշ անբաւ մանր բարերարութիւնքը: ♦

ԲԱՍՏՔԻ, պոնտին համբաւաւոր պատմիչ, ծնաւ 14 յունիսի 1798 Մորաւիոյ պզտի գիւղի մը մէջ. և մեռաւ 'ի Բրակա 27 մայիսի տարւոյս: Իր առաջին գրուածներն հրատարակեց 1817 տարիէն սկսեալ մինչև 1823 տարին. անկէ ետքը զանց Բրակա, Պոնտինոյ մայրաքաղաքը, ճոխացելու եւրոպական գլխաւոր լեզուաց գիտութեամբ, և հոն սկսաւ իր խուզարկութիւնքը Պոնտինոյ պատմութեան և սլաւեան ցեղից վրայ. և շատ նշանաւոր հատուածներ հրատարակեց օրագրի մը մէջ, զոր ինքը կը խմբագրէր տասը տարի անընդհատ, և

1836 թուին հրատարակեց գերմաներէն լեզուաւ առաջին հատորը Պատմութեան Պոնտինոյ, որուն լրումն հանդիսացաւ տոնախմբեցին իր բարեկամները մահուանէն քանի մը շաբաթ առաջ: Ազգը զինքն ազգային պատմաբան անուանեց և անոր մասնաւոր ոռնդի կապեց: Այս պատմութիւնն իր գրուածոց գլուխն է, որուն մէջ կը պաշտպանէ Չեկաց իրաւունք ու իղձերը, և չեկերէն թարգմանութիւնը հազիւ տասուրիւք տարի ետքը լոյս տեսաւ: Բալացի 1848 թուականին նախագահեց Բրակա սլաւներուն ազգաժողովոյն: 1849ին հրատարակեց բաշակցական ծրագիր մը (programme) բաժնելու զԱւստրիա եօթն ազգային խումբ, լայց ետքէն հրաժարեցաւ քաղաքական կեանքէ մինչև 1860: Անկէ ետեւ դարձեալ հրապարակ ելաւ ու 1861ին մտաւ Պոնտինոյ ազգաժողովոյն մէջ չեկերսփոխանաց գլուխն անցնելով: Աւստրիոյ աւազաժողովոյն ցկեանս անդամ անուանուելով հոտ քաղաքցաւ անկէ երբ Չեկերն երեսփոխանաց ժողովարանէն դուրս ելան, և ինքն առաջինն եղաւ ստորագրելու յայտարարութեանն ընդդէմ սահմանադրութեան: Յամին 1863 սկսաւ ընդգիմանալ լեկաց, և երբ 1867ին Մոսկուա աշխարհաւանդէ մը բացուեցաւ սլաւեան յիշատակաց, ինքն ալ այցելութեան գնաց, ինչպէս ուրիշ շատերն իբր ուխտագնացութիւն մը: Այս իրողութիւնները կասկած տուին թէ յայտնի համակրութիւն ունենայ Ռուսաց, լայց միշտ ժխտեց ըսելով թէ ինքն համայնարանէն է: Վերջին տարիներս Բալացի իր գրագիտական, պատմական և մատենագրական մանր գրուածները բոլորն ալ ժողովելով կարգաւորեց ու հաւաքում մը կազմեց, կոչելով զայն Ռաստոյ (Rasthost), յանուն նուազերգութեան որ ինքը շարադրեր էր 'ի պատիւ համանուն լեռան մը Մորաւիոյ: Այս Ռաստոյի վերջաբանին մէջ կը մարդարեանայ ոչ միայն Աւստրիոյ կործանումը, այլ նաեւ Մաճառ ազգին ջնջումը, որմէ և ոչ փշուր մը պիտի մնայ, կը գոչէ, տոնախմբելու Արքատի թագաւորութեան երկրորդ հազարերորդ դարադարձը:

ԳԵՌԻՍ ԲՈՒԼԷՏ ՍԿՐՈՔ (Poulett Scrope) անգլիացի հռչակաւոր մատենագիր հրաբույժներու վրայ, մեռաւ այս յունուարի 18ին, 'ի

Հասակի 79 ամաց: Իր գործոց գլուխն է Զերաբայիսից գրուածքն, որ հերոսական ամեն լեզուով թարգմանուած է:

ՏԻԽՆ ԺՈՌՅ ՍՅԱՏ, գաղղիացի անուանի վրայասան մատենագիր, մշար բարոյականութեամբ:

ՎՈՒԿ. ՎԱՆ ՀՈՒԿ (Van Houtte) քաղաքագլուխ Ի Պելճիա, Ի հասակի 66 ամաց: Ինքն ստեղծեց Էւրոպայի ցամաքին պարտիզադարմանութեան ամենագեղեցիկ հրաատարակութիւնն, անուանելով զայն փլուրա չերմանոցաց և պարտիզաց Եւրոպայ: Այս գործը փառաւոր պատկերներով սկսաւ հրատարակուիլ իր վերականգնութեամբն յամին 1845 և ոչ երբեք ընդհատեցաւ:

ՄԱՏԵՐՈՍ ՆՈՐԱ անգղիացի անգրիագործ: Իրեն գլխաւոր ձեռակերտներն են Վիկտորիա թագուհւոյն արձանը, Ս. Թովմիս ըստած հիւանդանոցին մէջ, Լորտ Տարպիս արձանը և Ֆրանչիլին նաւապետին արձանը: Լոնտրայի երկու հրապարակաց վրայ:

ԹԵՌՈՒՄ ՍԻԼՎԵՍԹԵՐ, գաղղիացի հռչակաւոր քննադատ գեղարուեստից: Իր գլխաւոր երկասիրութիւնն է Պատմորիւն կեդանի արուեստաւորաց, որուն մէջ այս դարուս գաղղիացի երեկելի արուեստաւորաց նկարագիրը կու տայ:

ՆԵԿՈՒ. ՊԵՐՈՒՆԵ (Bakunine) ռուս անուանի ընկերավար (socialiste): Ծնեք էր յամին 1814 և ուսումն առեր էր սպայորդւոց վարժարանն Ի Բեզրապուրկ. ետքէն մտաւ կայսերական պահանտորդաց գնդին թնգանթթաճիգ զօրաց մէջ իրր դրօշակիր, սակայն շատ չմնաց: Գամին 1841 իմաստասիրութիւն սովորելու համար Պետլին գնաց, անկէ Տրէգտա, ուր բարեկամացաւ Ռուկէ ռամկավարին հետ. և անոր Գերմանական Տարեցիրք ըստած օրագրին մէջ իմաստասիրական ճառ մը հրատարակեց: Անցաւ Տրէգտայէն Բարիզ, ետքը Յուրիկ, և ամեն տեղ ուր կ'իրթար յարաբերութիւն կը կապէր Բոլորիցից գաղղիկացի հետ, և քաղաքական ծայրայեղ սկզբունք ունեցող անձանց հետ: Ռուսիոյ կառավարութիւնն աւոր այս շարժմանց նպատակին վերահասու ըլլալով, հրամայեց որ շուտով հայրենիք վերադառնայ. Պաքունին չկատարեց այս հրամանը. այն ատեն տէրութիւնն ալ գրաւեց բոլոր ասացուածքը: Վերադառնալով Բարիզ՝ գործակից եղաւ Reforme անունով

օրագրին, և յամին 1847 Բոլոնիացի Հայրենասիրաց ժողովի մը մէջ խօսած ճառ մը անախորժ տպաւորութիւն մ'ըրաւ Ռուսիոյ դեսպանին վրայ, որ Լուդ. Փիլիպպոսի կառավարութեան ձեռքով գինքը վտարել տուաւ Գաղղիայէն: Պաքունին ապահինեցաւ Պրիւքսէլ, և երբ 1848 տարւոյն յեղափոխութիւնն եղաւ, նորէն Բարիզ դարձաւ: Քիչ ժամանակէն Բարիզէն ալ ելաւ գնաց Բրախա, վերջէն Պետլին ու Տրեպչաւ, և մեծ մասն ունեցաւ այն տեղուանքն հանգիստ խոովութիւններուն: Եւ երբ կ'ուզէր փախչիլ բռնուեցաւ Շէմինց, դատուեցաւ ու մահու դատապարտուեցաւ: Իրաւ գլխաւարտութեան դատակնիքը փոխուեցաւ, բայց Աւստրիոյ կառավարութեանն յանձնուեցաւ, որ անոր ձերբակալութիւնն ուզէր էր: Աւստրիա ալ զինքը Բրախայի պատերազմական ատենին առջև հանեց, ուր նորէն մահու դատապարտուեցաւ. սակայն վերջէն այս դատակնիքն ալ փոխուեցաւ Վերջապէս Ռուսիոյ կառավարութեան տրուեցաւ, և յետ խիստ բանտարգելութեան, յամին 1852, Կովկասու բանակը զրկուեցաւ իրեն հասարակ գիւնոր, ուր վճարելով իր այս գաւառ պատիժը, Զուիցերիոյ Լուկանոյ քաղաքը քաշուեցաւ իր ընտանեացը քով: Վերջերս Պետնա գնացած ըլլալով խորհրդակցելու համար բժշկի մը հետ իր տկարացած առողջութեանը վրայ, պանդոկի սենեկի մը մէջ մեռաւ հետու իրեններէն: Պաքունին գլուխ կը սեպուէր ուշկական (nihiliste) ըստած աղանդաւորաց Ռուսիոյ մէջ, և ծայրայեղութեան վերջին կէտն հասած էր խոովարարական սկզբանց:

ՀԵՐԻԿ. ՄԱՐԻԵՆՈՅ, քաղղիածնունդ անգղիացի տիւիլն, որ ոչ միայն քաղաքականութեան վրայ կը մատենագրէր, այլ նաեւ քաղաքական տնտեսութեան վրայ: Ծնած էր յամին 1802 Նորուիչ քաղաքն Անգղիոյ, և աղայութիւնէն ի վեր խուլ մնաց, Տուալիքը զինքը գրաւորատու եղաւ. գրեց պատմութիւններ, դատաւարակութեան վերաբերեալ գրեանք, ճանապարհորդութիւններ, և մասնաւոր չարք մը այնպիսի պատմութիւններու՝ որոնցմով ժողովրդեան կ'ընծայէր քաղաքական տնտեսութեան սկզբունքը: Այս պատմութիւնները մեծ յաղողութիւն գտան, և զանազան լեզուներ

րու թարգմանուեցան: Նոյնպիսի յաջողութիւն գտան նաև տղայոց համար գրած պատմութիւններն: Այս տիկինը յարատեւ գործակից էր նաև անգղիերէն Daily News ըստած բազմաձանօթ լրագրին խմբագրութեանը. և երբ տէրութիւնն ուզեց իրեն թոչակ կապել՝ յանձն չառաւ, ուզելով պահել իր անկախութիւնն իբր հրապարակագիր հեղինակ: Մեռաւ տիկինն անցեալ յունիսի 27ին, և ինքնագիր կենսագրութիւնը թողուց՝ որ հրատարակուելու վերայ է:

Ռոբերտ Նեպիը (Napier) անգղիացի հռչակաւոր ճարտարապետ, որ կանգնեց աւանդէն մեծ պահակար նաւերն օտար տէրութեանց, մեծամեծ ձուլարաններ հիմնեց, և ընկերութիւններ կազմեց: Մեռաւ անցեալ յունիսի 23ին, 'ի հասակի 83 ամաց: Հայրն հասարակ դարբին մ'էր, ինքն ալ սկսաւ իր ընթացքն հօրը գործատան մէջ:

Թոպօ. Էյըրս (Aird) սկոտացի բանաստեղծ, 'ի հասակի 74 տարեկան:

ՍԵՆՇԻՆՍԿԻ ԿՈՇՇԻՆՍԿԻ (Goszczynski) լեհացի բանաստեղծ, որ Ուքրանիայէն էր ծննդեամբ, և մասնակցեցաւ 1830 տարւոյն լեհաստանի յեղափոխութեանն, իբր դինուոր և իբր բանաստեղծ, և ետքը գաղթեց հայրենիքէն: Իր դիւցազներգական մեծ պատմութիւնն որ կ'ըսուի Դոնական ֆաւնեպի՝ լեհաց բանաստեղծութեան ամենազեղեցիկ ծաղիկներէն մէկն է: Ունի նաև արձակ գրուած պատմութիւններ:

ԳԼԱՐԱ ՊԱՒԵՐ (Bauer) գերմանացի տիկին վիպասան, որ նման անգղիացի վիպասան տիկնայց՝ այրական անուն առած էր և ճանչուած էր 'ի Գերմանիա ԿԱՐՈՒՍ ՏԵԴԼԵՑ (Detlef) անուամբ:

ԿԱՔԻՐԻ ԲԵՐԻԵ (Périer) գաղղիացի քաղաքագէտ, որդի համանուն մեծ պաշտօնակալին Լուդ. Փիրիպպոսի: Ծնած էր յամին 1812, և գլխաւորապէս տուաւ ինքը դիրքը ելեմտից ուսման և քաղաքական տնտեսութեան, այլ և այլ գրուածք հրատարակելով այս նիւթոց վրայ: Ուղեանական կուսակցութեանն անցաւ հասարակականականաց կողմը, և քիչ մը ժամանակ ալ պաշտօնակալ եղաւ ներքին գործոց Թիէրի նախագահութեան ատեն:

ՍԱՆԴԱ-ՍՆԱՆ մեքսիկացի աշխարհածա-
ՊՐԱԿ Գ.

ՆՈԹ ԳՕՐԱԳՐՈՒԽ, 'ի հասակի 84 տարւան, ԼԵՕՎԵՆԹԱԼ (Löwenthal) հունգարացի քաղաքագէտ խաղաղոց սատարինն, որ 20 տարիէ 'ի վեր է որ Անգղիա կը բնակէր, ուր մեռաւ անցեալ յունիսի 20:

ԿԱՐՈՒՍ ՍԻՐՐՈԿ (Simrock) գերմանացի բանաստեղծ, որ ծներ էր յամին 1802 Պօնն քաղաքը, ուր մեռաւ անցեալ յունիսի 18: Գերմանական մատենագրութիւնն մեծապէս երախտապարտ է այս բանաստեղծին, որ արդի գերմաներէն լեզուի փոխեց շատ մը հին քերթութիւններ, որոնց մէջ քերուածն Նիպելունկներուն (Niebelungen):

ՖԵՆԻՍ ԳԱՐԱԼԵՆՏ ՍԱԿՆԻՎԱՅԻ ՆՆԱՆԱՆՈՐ վիպասան, որուն բնիկ անունն երկար ժամանակ գաղտնի մնաց. դուստր էր համալուրկից վաճառականի մը, որ շատ տարիներէ 'ի վեր Գաւորքս քաղուած էր, և հօն իր հայրենի քաղաքին հիւպատոսի պաշտօն կը վարէր: Վիպասանուհւոյս բնիկ անունն էր ԿԵԿԵԼԻԱ ՊՈԼ (Bohl), որ իր բազմաթիւ վիպասանութեանց մէջ մասնաւորապէս Սնտալուսիոյ բարքն ու սովորութիւններն ըստորագրած է:

ՍԻՐ ՈՒԼԻԵՏ ԳԵՅ (Sir William Kaye) անգղիացի խորամուխ հնդկագէտ, որ շատ տարի պաշտօն վարեր է Հնդկաստան, մեռաւ անցեալ յունիսի 24ին 'ի հասակի 63 ամաց: Ունի Պատմութիւն պատերազմի Աթլանտիկ, և Պատմութիւն վերջին ապստամբութեան անգղիական Հնդկաստանի, որոնք երկուքն ալ շատ յարգի գրուածք են:

ՍԵՆԵՍ. ՖԵՆԻՍԵ (Fenyes) հունգարացի հեղինակ աշխարհագրական, վիճակագրական և տնտեսական գրուածոց Հունգարիոյ վրայ: Ծնած էր յամին 1807, և մեռաւ անցեալ յունիսի 23ին 'ի Բէշթ:

ՎՈԼՈՎՍԿԻ (Wolowsky) լեհացի, գաղղիական ծերակուտի անդամ, որ ծնած էր Վարսաւիա յամին 1810: Բնտ ապստամբութեան լեհաց 1831 տարւոյն՝ գաղթեց 'ի Գաղղիա. ուր միշտ բնակեցաւ, գաղղիացի գրուեցաւ, և արդի ժամանակաց բաղմահուց անտեսագետներէն մէկն եղաւ: Գործնական տնտեսագէտ, Վոլովսկի Գաղղիոյ կապտածական ընկերութեան (Crédit foncier) հիմնադիրներէն մէկն եղաւ:

ԵԼԻԱ ՏՈՒՍԵՆ (Dixon) մականուանեալ Հայր անգղիացի վերանորոգողաց, վասն զի յամին 1840 ինքն ու ձեռնարկ (John Knight)

և Դաւիթ Ռիճուէյ (David Ridgway) սկսան շարժել աղգային ժողովարանը վերանորոգելու և հանրական բուհարկութիւն հաստատելու: Տիրքըն ծնած էր յամին 1789, և մեռաւ անցեալ յուլիսի վերջերն Սէդզիոյ մէջ:

ՅՈՒՆՈՒՍ ԿԼԵՅ (Klein) հունգարացի եղբւրքակ քանաստեղծ, և ունի Պապուպիւն եղերերգութեան, որուն 13 հատորքն հրատարակուած են: Ծնած էր յամին 1810 ՚ի Միքլոց Հունգարիոյ, և մեռաւ անցեալ օգոստոսի 2ին ՚ի Պեռլին:

ՀԵՐԵՆ ՖԻՇԷ (Fichte) որդի գերմանացի կողմէր Ֆիշէ անուանի իմաստասիրին, որ գերագանցական գաղափարականութիւնն (idéisme transcendantal) ստեղծեց: Իսկ Հէրման Ֆիշէ ունի բազմաթիւ գրուածք իմաստասիրութեան վրայ, բայց չեն ողջմիր:

ԲԻՐՄԵՐՆԵՆ ԿՐԵՐԵՑ. ԷԼԵՄԲԵՐԿ (Ehremberg) գերմանացի աշխարհահռչակ բնադէրին, որ ծնած էր 19 ապրիլի 1794 տարւոյն և մեռաւ անցեալ յունիսի 27: Նախ աստուածաբանութիւն սովորեցաւ ՚ի Լիբսիա, յետոյ բժշկութիւն ՚ի Պեռլին, շուտ մը տալով ինքը գիրքը բնական գիտութեանց, մանաւանդ մանրացուցական կենդանաբանութեան հետամուտ եղաւ: Երիտասարդութեան ժամանակ երկու մեծ ճանապարհորդութիւններ ըրաւ, մէկն Ամերիկէ Հէմբրիհէ հետ, որ կենանքն հոն թողուց, միւսն Ասիա՝ Հումպոլդի հետ, և մէկտեղ բերաւ հարուստ հաւաքումներ և շատ նշանաւոր գիտողութիւններ: Ետքը բոլորովին տուաւ ինքը գիրքը ջրաճճիներուն ուսման, և բովանդակ կենանքն անոնց քննութեանը նուիրեց: Կենդանաբանութեան այս մասին վրայ իրեն ըրած աշխատանքն մեծ յարգ գտան բնագիտաց առջև աշխարհիս ամեն կողմէ: Ե մեր դարուն մէջ ինքն առաջին եղաւ ջրաճճեաց քննութիւն ընող, թէ և իր գիտողութեանց ու անոնցմէ հետեցուցած

եղրակացութեանց շատերը հակառակութիւն կրած ըլլան: Սակայն նոյն իսկ այսօր գիտութեան այս կէտը դեռ ևս այնչափ մթին է որ կարելի չէ ըսել թէ ուր կը կենայ ճշմարտութիւնը: Բաց ՚ի այս նախաձեռնար աշխատութիւններէն, որոնց ինչուան վերջին շունչն ետեւ եղաւ Էրէմպէրիկ, յիշատակութեան արժանի գրուածք մ'ալ ունի, որուն մէջ կը ցուցնէ թէ բնական գիտութիւնք և բժշկականութիւնք բոլորովին չեն ճշմարտեր ոմանց մէջ բերած այն վտանգը, թէ մարդուս իմացական զարգացումն անկող կրնայ մարմինը տկարանալ: Սիրելի և յարգելի այն ամենուն որ գիրքը ճանչցեր էին, Էրէմպէրիկ ունեցաւ այն ամեն պատիւները, որոնցմով մեր օրերը կը վարձատրուին գիտուններն իրենց ըրած բարեացն համար:

ՋՈՐՃ ՍՄԻԹ (George Smith) անգղիացի բազմահմուտ ասորագէտ, որ ասկէ քանի մը տարի առաջ նշանաւոր գիւտ մ'ըրաւ Ասորեստանի մէջ, յԱնգղիա բերելով շատ մը աղիւսներ որոնց վրայ ամեն կողմանէ վերէն վար ծեփուած էր սեպաձև գրերով, որոնք Ասորբանիբալի գրատան մնացորդներն էին, և ասորերէն ջրհեղեղին պատմութեան թարգմանութիւնն էին:

Յետ բազմաթիւ ուղեւորութեանց Տիրքիսի և Եփրատայ ախանցը վրայ, վերջին անգամ ալ կ'երթար նորէն իր քննութեանց ասպարէզը մոտենելու, երբ մահն վրան հասաւ ՚ի Հալէպ:

ՖԵԼԻՍԷՆ ԴՈՒԻՍ ԳԱՂՂԻԱԳԻ ՀՈՇԱԿԱՆՈՐ երգայարդար և երաժիշտ, որ ծներ էր 13 ապրիլի 1810:

ՏԸ ԼԱ ԿՐԵՆՏԵՐ ԳԱՂՂԻԱԳԻ փոխածովակալ, որ Գոլինջիի կուսակալ և հրամանար եղեր էր:

ԵՐԻՔԷՆՈՍ ՖՐՈՄԵՆԿԵՆ ԳԱՂՂԻԱԳԻ անուանի պատկերահան և մատենագիր, որ ծներ էր յամին 1820:

